BATI ERMENISTAN HÜKÜMETI

GOUVERNEMENT
D'ARMÉNIE OCCIDENTALE

حكومة أرمينيا الغربية

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
GOVERNMENT OF WESTERN ARMENIA

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1700 տարի առաջ մեզ՝հայերիս բաժանեցին արևելյան և արևմտյան մասերի:1894 թվականից Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության սահմանների ներսում գտնվող այլ հայաբնակ վայրերում հայության նկատմաբ սկսվեցին իրականացվել ծրագրավորված ջարդեր: Օսմանյան կայսերության հայակեր մեքենան ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ներկայությամբ փորձ կատարեց ցեղասպանել հայ ժողովրդին և գրավել նրա երկիրը, այդ օրվանից անցել է 100 տարի: Արդեն 100 տարի 8 մլն հայ ստիպված տուն է դնում, սերունդ է ունենում իր բնօրրանից դուրս, իսկ նրաց՝ ում հաջողվեց ողջ մնալ, արդեն 100 տարի ապրում են ծպտված:

Անկախ պետականություն ունենալուց 23 տարի անց Ցեղասպանության 100-ամյակի Հանձնաժողովի կողմից ընդունված հռչակագիրը ամփոփեց հայության համար կարևորագույն հիմնադրույթները: Վստահ ենք նաև, որ մոտ ապագայում Ցյուրիխյան արձանագրությունները նույնպես չեղյալ կհայտարավրի:

Մենք ըմբռնումով ենք մոտենում Հայաստանի Հանրապետության կողմից Վիլսոնյան Հայաստանի և առհասարակ հայրենատիրության նկատմամբ որդեգրած քաղաքականությունը, նաև խորապես գիտակցում ենք՝ ամեն ինչ ունի իր ժամանակը: Հիշենք որ, Փարիզի վեհաժողովի՝այսինքն հիսուն երկրների անունից, Միացյալ Նահանգների նախագահին դիմած երկրների թվում է նաև այսօրվա Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հարապետությունը, որոնց համար ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի կատարումը պարտադիր է: Հայաստան Պետության տարածքային ամբողջականությանը այլընտրանք չկա: Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության համար խիստ կարևոր են հատկապես այս պարբերությունը.

….«ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում»:

Հայության համար այս վճռական պահին, Հայաստանի Հանրապետության կողքին՝քաղաքական դաշտում, որպես Իրավարար Վճռի շահառու, հանդես է գալիս Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը, հռչակված 2011թ. փետրվարի 4-ին, ով որպես Արևմտյան Հայաստանի հայության բարձրագույն քաղաքական մարմին՝ ներկայացնում է Արևմտյան Հայաստանի հայության հայրենատիրության իրավունքը:

Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության նպատակն է՝ Սևրի դաշնագրով և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար Վճռով, վերակերտել հայ ժողովրդին հատկացված Հայոց Աշխարհի մի հատվածը: Հայրենատիրության հարցը անհատները չեն կարող լուծել՝ բայց այդ անհատները մեր աշխատանքներին կարող են մաս կազմել: Այսօր նորից

ևս մեկ անգամ առաջարկում ենք բոլոր կառույցներին և շահագրգիռ կողմերին մասնակցել մեր աշխատանքներին:

Վարչապետ՝
Ա. ՄԿՐՏՉԵԱՆ---------

«02» փետրվրա 2015թ.

Գերմանիա, քաղաք Մայնց